

# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏՆ ԱՅՑԵԼԵԼ Է ԱՐԶԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ 14.07.2014

Մարզի համայնքներ կատարվող պարբերական այցելությունների շրջանակներում Կոտայքի մարզպետ Ա. Հարությունյանը եղել է մարզի Արզական համայնքում:

Աշխատանքային այցի մեկնարկը տրվել է համայնքի ավագանու, համայնքի ղեկավարի աշխատակազմի և բնակիչների հետ հանդիպումով, որի ընթացքում քննարկվել են համայնքի զարգացման ծրագրով նախատեսված և իրականացվող աշխատանքների ընթացքին ու համայնքային տարբեր ենթակառուցվածքների գործունեությանը վերաբերող մի շարք հարցեր:

Այնուհետև Կոտայքի մարզպետ Ա. Հարությունյանն այցելել է Արզականի բժշկական ամբուլատորիա: Առողջապահական այս հաստատությունում Կոտայքի մարզպետին ներկայացվել են տեղում իրականացվող աշխատանքների հիմնական ուղղությունները: Հաստատության աշխատակիցների հետ ունեցած զրույցի ընթացքում Կոտայքի մարզպետը կարևորել է ազգաբնակչության բուժսպասարկմանը միտված գործառույթների պատշաճ և արդյունավետ կազմակերպումը:

Արզականի միջնակարգ դպրոցի շենքային պայմաններին ծանոթանալուց հետո Կոտայքի մարզպետ Ա. Հարությունյանը հանդիպում է ունեցել կրթօջախի մանկավարժների հետ: Ուսուցիչների հետ հանդիպման ընթացքում քննարկված հարցերին մաս են կազմել ինչպես հանրակրթության բնագավառի բարեփոխումներն, այնպես էլ ժամանակակից դպրոցի առջև դրված պահանջներն ու համապատասխան մոտեցումները: Այցելության ավարտին մարզպետը եղել է նաև Արզականի մանկապարտեզում, հետևել նախադպրոցական ուսումնական հաստատության աշխատանքների ընթացքին, զրուցել աշխատակիցների հետ: